ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՋՐԱՌ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց փակուղի 8, (6-րդ հարկ), հեռ.՝ 012 74-00-77, էլ. փոստ info@jrar.am

«04» 12 2024 թ. ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ » ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն, այսուհետ՝ Պատվիրատու) մասնագիտական խմբի կողմից 08.10.2024 թվականին կազմված և ներկայացված արձանագրությամբ և դրան նախորդող գրություններով արձանագրված «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊ Ընկերությանը (այսուհետ՝ Կատարող) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող Կատարողների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. Ներկայացված փաստերը և պահանջը.

«Ջրառ» Ընկերության մասնագիտական խումբը (խմբում ընդգրկված են ինչպես Ընկերության հանձնաժողովի անդամները, այնպես էլ «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» Ընկերության տնօրենը ներկա են եղել կատարված աշխատանքների տեղազննմանը և 08.10.2024 թվականին կազմված ակտով արձանագրել են, որ ուսումնասիրելով փաստացի իրավիճակը «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կատարված աշխատանքները՝ ըստ պոմպակայանների և ջրամբարի հետևյալ պատկերն է.

1. Ռանչպարի 1-ին աստիճանի պոմպակայանի փակ խողովակաշարի վրա տեղադրված է հոսքաչափը, որի ցուցմունքները 10÷15 տոկոսով շեղված են 1010բ շարժական հոսքաչափի չափված արդյունքներից:

2. Բաց խողովակաշարի վրա տեղադրված է հոսքաչափ, որի ցուցմունք ցույց տվող մասը բացակայում է, հանվել է «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ-ի կողմից:

3. Ռանչպար 2-րդ աստիճանի պոմպակայանի մղման խողովակաշարի վրա տեղադրված է հոսքաչափ, բացակայում է տեղադրված սարքը սնուցող էլեկտրալարը:

4. Ակնալճի պոմպակայանի թիվ 2-րդ պոմպի մղման խողովակաշարի վրա տեղադրված հոսքաչափի ցուցմունքները 12÷18 տոկոսով շեղվում են փաստացի հիդրոպտտանով չափման արդյունքներից:

5. Թիվ 1-ին պոմպի մղման խողովակաշարի վրա տեղադրված է հոսքաչափ, «Շին Մոնտաժ Տրանս» ՍՊԸ-ի կողմից հանվել է ցուցմունք ցույց տվող մասը:

6. Մխչյանի 1-ին աստիճանի պոմպակայանի երեք մղման խողովակաշարերի վրա տեղադրված են հոսքաչափեր, որոնք չեն փորձարկվել: Տեղադրվել են պոմպակայանի տարածքից դուրս՝ առանց պաշտպանիչ արկղների:

7. Մխչյանի 2-րդ աստիճանի պոմպակայանի երկու մղման խողովակաշարերի վրա տեղադրված են հոսքաչափեր, որոնք նույնպես չեն փորձարկվել, իսկ սարքերի սնման մալուխները ցաք ու ցրիվ ցրված են մղման խողովակաշարերի շրջակայքում:

8. Զանգակատան ջրամբարից ջրառ իրականացնող խողովակաշարի վրա տեղադրված հոսքաչափը աշխատում է և ցուցմունքներն ունեն 10÷15 տոկոսի շեղում «Յարցև» տիպի ջրաչափական դիտակետում արձանագրվող ցուցմունքներից:

9. Ազատի քառաստիճան պոմպակայանների մղման խողովակաշարերի վրա չեն տեղադրվել թվով 5 հատ հոսքաչափեր:

Նշել են, որ բոլոր Բոլոր տեղադրված «SANA» տիպի հոսքաչափերի պահպանության արկղերը բացակայում են: Բացակայում են հոսքաչափերի անձնագրերը և չունեն պետ. ստանդարտի կողմից տրվող սերտիֆիկատները:

Ղեկավարվելով Պայմանագրի 2.1.3 կետով՝ խնդրել են՝ միակողմանի լուծել Պայմանագիրը աշխատանքների կատարող «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» Ընկերության հետ:

2.Էական նշանակություն ունեցող փաստերը.

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 20.12.2023 թվականին «Ջրառ» ՓԲԸ-ի և «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի միջև ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1 ծածկագրով կնքվել է պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր:

2. 20.12.2023 թվականին կնքված ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1 պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ով սահմանված Ակնալճի պոմպակայանի, Ռանչպարի 1-ին աստիճանի պոմպակայանի, Ռանչպարի 2-րդ աստիճանի պոմպակայանի, Մխչյանի 1-ին աստիճանի պոմպակայանի, Մխչյանի 2-րդ աստիճանի պոմպակայանի, Ազատի 1-ին աստիճանի, Ազատի 2-րդ աստիճանի պոմպակայանի, Զանգակատան ջրամբարի էլեկտրական սարքերի տեղադրման աշխատանքների կատարման վերջնաժամկետ է նշվել 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:

3. 24.12.2023 թվականի կնքված՝ «20.12.2023 թվականին կնքված N ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին» N 1 Համաձայնագրի՝ Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամանակացույցի համաձայն էլեկտրական սարքերի տեղադրման աշխատանքների կատարման վերջնաժամկետ է նշվել 2024 թվականի ոռոգման սեզոնի սկիզբը:

4. 08.04.2024 թվականին «Ջրառ» Ընկերությունը իր N 475 գրությամբ տեղեկացրել է Կատարողին, որ մինչև 2024 թվականի ոռոգման սեզոնի սկիզբը անհրաժեշտ է ավարտել ուլտրաձայնային հոսքաչափերի տեղադրումը՝ խողովակներում ջրահոսքի առկայության պայմաններում սարքերի գործարկման և կարգաբերման աշխատանքները ժամանակին ավարտելու համար: Նշել նաև. որ մինչև աշխատանքների սկիզբը անհրաժեշտ է «Ջրառ» Ընկերություն ներկայացնել Կատարողի կողմից տեղադրվող ստուգաչափում անցած հոսքաչափերի նմուշը և տեխնիկական անձնագրերը: Լրացուցիչ տեղեկացրել է, որ «Ջրառ» Ընկերությունում ոռոգման սեզոնը սկսվում է 2024 թվականի ապրիլի 15-ից:

5. Պայմանագրի 2.1.2-ի համաձայն Կապալառուի կողմից պայմանագրի 1.2 կետով ինչպես նաև Պայմանագրի բաղկացուցիչ մաս կազմող Համաձայնագրի 1.1 կետում նշված N1 Հավելվածով սահմանված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

6. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պետք է ապահովել ՀՀ Ջրային օրենսգրքի իմպերատիվ պահանջները, ինչպես նաև ոռոգման ջրամատակարարման անխափան լինելը և ղեկավարվելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.2 կետով իր հայեցողությամբ Կատարողի համար «Ջրառ» Ընկերությունը սահմանել է աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել է Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը:

5. 22.05.2024 թվականին «Ջրառ» Ընկերությունը իր N 709 գրությամբ հիշեցրել է Կատարողին, որ ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում մինչև 2024 թվականի ոռոգման սեզոնի սկիզբը անհրաժեշտ էր ավարտել ուլտրաձայնային հոսքաչափերի տեղադրումը՝ խողովակներում ջրահոսքի առկայության պայմաններում գործարկման և կարգաբերման աշխատանքները ժամանակին ավարտելու համար: Միաժամանակ «Ջրառ» Ընկերությունը արձանագրել է, որ 21.05.2024 թվականի դրությամբ ոչ միայն չեն ներկայացվել Կատարողի կողմից տեղադրման ենթակա ստուգաչափում անցած հոսքաչափերի տեխնիկական անձնագրերը, այլ նաև չեն ավարտվել հոսքաչափերի տեղադրման աշխատանքները, չնայած այն հանգամանքին, որ 2024 թ. ապրիլի 17-ից ոռոգման սեզոնն արդեն սկսվել է:Միաժամանակ տեղեկացվել է Կարատողին որ չնայած վերջին մեկ շաբաթվա ընթացքում Ընկերության պոմպակայանները չեն գործել, և այն Կատարողի կողմից չի օգտագործվել որպես հոսքաչափերի՝

անխոչընդոտ տեղադրման բարենպաստ հնարավորություն: Մոտակա մեկ շաբաթվա ընթացքում ևս պոմպակայանները չեն աշխատելու: Խնդրել է ձեռնարկել բոլոր անհետաձգելի միջոցները, Պայմանագրով ստանձված պարտավորությունները սեղմ ժամկետում և պատշաճ կերպով կատարելու համար:

6. 30.08.2024 թվականին Պատվիրատուն իր N 1101 գրությամբ կրկին տեղեկացրել է Կատարողին, 20.12.2023թ կնքված ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1 ծածկագրով պայմանագրի և կից համաձայնագրի շրջանակներում մինչև 2024 թ. ոռոգման սեզոնի սկիզբն անհրաժեշտ էր ավարտել ուլտրաձայնային հոսքաչափերի տեղադրումը՝ խողովակներում ջրահոսքի առկայության պայմաններում գործարկման և կարգաբերման աշխատանքները ժամանակին ավարտելու համար, մինչդեռ 30.08.2024 թ. դրությամբ Կատարողի կողմից չեն ավարտվել հոսքաչափերի տեղադրման աշխատանքները: Եվս մեկ անգամ խնդրել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում ստանձած պարտավորությունները մինչև 2024 թ. սեպտեմբերի 9-ի ողջ ծավալով և պատշաճ կերպով կատարելու համար:Եվ հղում անելով Պայմանագրի 2.1.3 կետի դրույթների, նշել, որ հակառակ պարագայում «Ջրառ» ՓԲԸ կողմից միակողմանի կլուծվի ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1 ծածկագրով 20.12.2023թ կնքված պայմանագիրը:

7. 12.09.2024 թվականին Պատվիրատուն իր N 1140 գրությամբ տեղեկացրել է Կատարողին, որ Ազատի 4-րդ աստիճանի պոմպակայանի ճնշումային խողովակաշարում 2024 թվականի սեպտեմբերի 13-ին ջուր չի լինելու, ինչը հնարավորություն կտա հոսքաչափն անխոչընդոտ տեղադրել:

8. **Կատարողը վերը թվարկված բոլոր գրություններին որևէ կերպ չի արձագանքել՝ այն է չի նշել պարտավորությունների չկատարման պատճառը և դրսևորել է բացարձակ անգործություն:**

9. 08.10.2024 թվականին հանձնաժողովը արձանագրել է, որ կատարված աշխատանքները թերի են, չեն համապատասխանում 20.12.2023 թվականին «Ջրառ» ՓԲԸ-ի և «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի միջև ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1 ծածկագրով կնքված՝ պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի և կից համաձայնագրի անբաժան մաս կազմող հավելվածներով սահմանված պահանջներին, բոլոր ժամկետները սպառված են, կատարված աշխատանքները իրականացված են թերի, ոչ ամբողջական:

3.Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը

Ուսումնասիրելով ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1 ծածկագրով ընթացակարգը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Կատարողն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող Կատարողների ցուցակում, եթե՝

ա. **խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և Կատարողը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

(….):

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: **Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող Կատարողների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա**: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող Կատարողների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: **Կատարողը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:**

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է

պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Հարկ է նշել, որ 18.11.2024 թվականին «Ջրառ» ՓԲԸ-ի և «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի միջև ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1 ծածկագրով կնքված պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվել է 22.11.2024 թվականին:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը՝ դրանք համադրելով առկա ապացույցների հետ արձանագրում եմ, որ **ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-23/29-1** ծածկագրով 20.12.2023 թվականին «Ջրառ» ՓԲԸ-ի և **«ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ»** ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրով Մասնակիցը խախտել է Պայմանագրի անբաժան մաս կազմող Համաձայնագրին կից N1 Հավելվածով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը՝ դրսևորելով բացարձակ անգործություն, որն էլ հանգեցնում է վերջինիս Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և Պայմանագրի 2.1.3-րդ կետով

ՈՐՈՇԵՑԻ

1. «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 01303697, գրանցման հասցե՝ ՀՀ ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Օգանովի փ., շ78/14) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.. Սույն որոշման օրինակը ուղարկել մասնակցին և ՀՀ Ֆինանսների նախարարություն:

3. Որոշումը կարող է բողոքարկվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ այն ստանալու օրվանից երեսուն օրվա ընթացքում:

4. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրը:

ՏՆՕՐԵՆ՝ **Ա. ԱԲԳԱՐՅԱՆ**